

«ՀԱՆԳԻՏ ԱՄՍՕՐԵԱՅ,, ԻՆ

ՁՆ Հ. Պ. ԷՍԱՊԱԼԵԱՆԻ

Արարատեան դաշտերէն դարեր անծիր կ'հոլովին.

Անձեր, դէպքեր կը պանան, կարծես առած բեւն հովին.

Շարան շարան բանակներ, արփայ, իշխան, գորավար՝

Մերք լոյսի մէջ՝ փառայեղ, մերք ալ պատած մուք խաւար:

Վեհ Մասիսի գագաթէն ալեւորներ փաշատե

կը դիտեն վար՝ վիհին մէջ՝ անծայր պարը, գոր Հադէս՝

հաղաղութեան մերկ գիրկէն դուրս է դիւքած՝ խոռվագին.

Դաշտեր արին, լեռներ լերկ, կագն ու կոիւր հայ քագին:

Ալեւորներն լուռ մըռայլ՝ հանդիսատես դէպքերուն՝

Լոյս-խաւարով կը գանգեն՝ չուն խօլական, պարն եռուն: —

Ամենակուլ խաւարէն ո՞վ լոյսը մեզ կ'ազատէ.

Մեր պատմութեան էջերէն ո՞վ մըշուշը փարատէ:

Արագածի լանջերէն գետ մը ահեղ կը յորդէ.

Դաշտեր, ժայռեր, ապառած՝ նա կը պատուէ, կը հորդէ:

Ակունքներէ բազմագան նա ջուր կ'առնէ, կ'ուռնանայ,

ու Սեւանայ կոնֆին մէջ նա կը քափի, լընանայ:

Այդ մայրենի բարբառն է՝ իմ պաշտելի հայերէն,

Նուիրական աւանդը՝ մեր անըման հայրերէն:

Ո՞ր աչքերը պիտ' խուզեն անոր գանձը նոյս ակին.

Ո՞ր նուրբ ձեռքը պիտ' քննէ տենդոտ զարկը երակին:

Կամարներէն կիսափուլ Հայաստանի լեռն ու բլուր՝

Հայ հաննարի հըրաշֆներ կը պատմեն մեզ մեղմ ու լուռ:

Հայ հոգիէն մորմոճոյ ցաւի, վիշտի բիւր երգեր

Կախարդ ոյժ մը արուեստի՝ քանաֆ-գրչով է մոգեր:

Պիտի բարձուի՞, ըսէ՛ք մեզ, այդ դիւքանքը կաշկանդիչ.

Պիտի լուծուի՞ն ալ երբեք կապըն հմայփի՝ ժանտ, ֆանդիչ:

Հայ արուեստի, գիտութեան՝ վառ արեւը՝ ճոյլ ոսկի,

Մինչեւ ե՞րբ դեռ շառագոյն ամպի ետին սողոսկի:

Բայց ոչ. տեսէ՛ք. խաւարը կը նահանջէ լեռնէ լեռ.

Ալ կոտրած են դիւքանքի ժանգոտ մըրոտ հին քելեր:

Եւ Դանուբեան ափերէն հերոս մը սէգ, ֆաջարի

Յաղթանակներ կը տօնէ յիսուն տարուան պայֆարի:

Քանի՞ գոհար հայ լեզուի, հայ արուեստի ի՞նչ աւար,

Ջոր ի գուր տեղ կը կոծէ ու կը սըգայ ժանտ խաւար:

Յաղթանակի այս տօնիդ, ՀԱՆԳԻՏ, փա՛նֆ ֆեգ ու պարծանֆ.

Յիսուն անմահ հատորիդ՝ յիսուն նոր շարֆ կը ցանկանֆ:

ՌԻԳԵՐԶ

ՏՕԲԹ. ՎԱՀՐԱՄ Յ. ԹՈՐԳՈՄԵԱՆԻ

«Հանդէս Ամսօրեայ»

Յնծալից Տօնդ է, տօնդ յիսնամեայ

Ապրէ շատ երկար

Ձի դու ցարդ յուրքի այգի մը եղար.

Այգի բարեբեր

Ձոր Մ'իսիքարեան վեճնացի Հայրեր

Իրենց ֆրոնիքին

Արդար վաստակով ձեռատունկ ըրին.

Մօցէդ անապառ

Հոսեցնելու անմահն նեկտար,

Հայկական մտֆին

Ջարգացումն յառաջ մղել տենդագին:

Դու նոյս Գանձարան

Հանդիսացար վաղ, հայ ազգայնութեան,

Մեղուաջան փութով

Տակաւ առ տակաւ յայտնաբերելով

Թանգ յիշատակներ՝

Որոնք մոխրածածկ դարերէ ի վեր

Անյայտ մնային

Կամ մոռացութեան խորը սեւ վիհին:

Յետու մը եղար,

«Կա՛ց, արեւ» ըսիր «Թո՛ղ ֆու լուսաւոր

«Շողերդ ուղղուին

«Հայոց Պատմութեան կէտերուն մըրին:

«Հայը պէտք է որ

«Ա՛լ ճանչնայ նշդիւ, իր յիստ փառաւոր

«Օրերն անցեալին

«Որուն անտեղեակ է ամենեւին»

Այսպէս դու մարդիչ

Կրքարան մ'եղար, նաեւ գարբուցիչ

Բանասիրութեան

Որ մինչեւ ֆու օրդ էր կիսակենդան,

Եւ ո՛րքան անքիւ

Նիւքեր լոյս տեսան «Հանդէս»իդ շնորհիւ

Հայ Պատմութեան

Ինչեք փրկեցիր, կարուստի ցանկէն:

Հատորներդ յիսուն

Գերագանցապէս բոլորն ալ գեղուն

Են յոյժ շահեկան

Դասերով ընտիր, լուրջ, ուսումնական,

Որով ժողվեցիր

Ինչ որ կը մնար հոս հոն ցանուցիր,

Իբր արտադրութիւն

Անյայտ մնացած հայ Գրիչներուն:

Շֆեղ քանգարան

Մ'ես դու ապաքէն, մեծ հանդիսարան,

Ուր հայուն հաննար՝

Կը փայլի իբրեւ փարոս մշտավառ:

Օ՞ն մարքեմ ֆեգ արդ

Բազմերամ տարի, յաջող բարեբաստ.

Քու քերթերդ ըլլան

Յարաճուն ինչպէս հատիկներ ցորեան,

Աշխարհի ծագէն

Մինչեւ միւս ծագն՝ անոնք վառ պահեն

Հայ սիրտերու մէջ

Ուսման, գիտութեան սէլը միշտ անշէջ.

Եւ հայ կրքութեան

Նախակարապետ ցանգ հանդիսանան:

Պարիս, 21 Յուլիս 1937: